

Յու. Հ. ՄՈՐԻՔՅԱՆ

ԹՈՐՔԻԱՅԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԸ ԵՎ ԼՆՈՆԱՀԱՆՔԱՅԻՆ
ԱՐԳՅՈՒՆԱՔՆԵՐԻ ԹՅՈՒՆԸ

Թուրքիայում հայտնաբերված են օգտակար հանածոների բոլոր հիմնական խմբերի՝ վառելիքային, մետալուրգիական, քիմիական և շինանյութերի արդյունաբերական նշանակություն ունեցող հանքավայրեր: Թեև նրա տարածքը երկրաբանական տեսակետից գեոևս լրիվ ուսումնասիրված չէ, այնուհանդերձ կարելի է որոշ պատկերացում կազմել նրա ընդերքի հարստությունների որակական, ինչպես նաև քանակական ցուցանիշների մասին: Վերջիններս հիմք են տալիս պնդելու, որ երկրաբանական ուսումնասիրվածության արդի մակարդակով էլ Թուրքիան պատկանում է աշխարհի հանքային ռեսուրսներով համեմատաբար հարուստ ռեգիոնների թվին:

Թուրքիայի ընդերքի հարստությունները ձևավորվել են երկրաբանական տարբեր ժամանակաշրջաններում ու ամենաբազմապիսի պայմաններում, այնուամենայնիվ ամենատարածված գոյացումները վերաբերվում են մեկուկույն ու կայնոզոյան դարաշրջաններին:

Գտնվելով ալպ-հիմալայան երիտասարդ ծալքավորությունների դոտու միջին հատվածում, Թուրքիայի տարածքն աչքի է ընկնում մետաղային հանածոների որոշ տեսակների զգալի առկայությամբ:

Մետաղային օգտակար հանածոների հանքավայրերը հիմնականում երրորդական, մասամբ նաև կավճի հասակի են և պատկանում են Միջերկրածովային մեզո-կայնոզոյան մարզին (Հ. Գ. Մաղաբյան, 1961): Իսկ ոչ մետաղային օգտակար հանածոների հանքավայրերի առաջացումը կապված է հիմնականում պալեոզոյան և մասամբ մեզոզոյան ու կայնոզոյան ժամանակաշրջանների գոյացումների հետ: Մետամորֆիկ ապարներն այստեղ հանդես են գալիս գնեյսների, թերթաքարերի, քվարցիտների և մարմարի ձևով: Մարմարի հանքավայրերը հերցինյան ծագում ունեն, իսկ քարածխինը և գորշ ածխինը՝ գեոևս և մասամբ կարբոնի հասակի են (Կ. Էրենթոզ, 1967 թ):

Թուրքական դարավոր տիրապետության ընթացքում երկրաբանական առումով երկիրը թույլ է ուսումնասիրվել և նոր հանքավայրեր ու հանքատեսակներ մինչև վերջին տասնամյակները գրեթե չեն հայտնաբերվել, որոնք անձանոթ լինելին նրա հին բնակիչներին: Այնուհանդերձ մինչև 1930-ական թվականների կեսերը ոչ ինքը՝ պետությունը, ոչ թուրքական ազգային բուրժուազիան և ոչ էլ օտարերկրյա կապիտալը ակտիվ հետաքրքրություն երկրի ընդերքի հարստությունների նկատմամբ չէին դրսևորվում: Դրությունը որոշ չափով փոխվում է, երբ 1935 թ. № 2804 օրենքի համաձայն Անկարայում ստեղծվում է Լեռնային գիտա-հետազոտական ինստիտուտը (Maden Tetkil. ve Arama), որը հետագայում ծավալեց օգտակար հանածոների որոնողական աշխատանքները և հիմք դրեց բնական ռեսուրսների արդիական գիտական ուսումնասիրմանը: Ավելի ուշ օգտակար հանածոների որոնողական-հետախուզական աշխատանքներին սկսում է մասնակցել նաև օտարերկրյա

(հատկապես տմերիկյան) կապիտալը: Այն ոչ միայն վարկավորում է այս ինստիտուտին, այլև մենաշնորհային իրավունք է ստանում երկրի բնական հարստությունների հետազոտման համար: Չկարողանալով իր արտաքին պարտքերը մարել, Թուրքիան տնտեսապես կախման մեջ ընկավ զարգացած կապիտալիստական երկրներից, որոնք շահագրգռված չլինելով Թուրքիայի վերամշակող արդյունաբերության զարգացման գործում, զարկ էին տալիս հանքային ռեսուրսների արդյունահանմանը և արտասահման արտահանելուն: Երկիրը, ըստ էության, սկսեց վերածվել գլխավոր կապիտալիստական երկրների հումքային կցորդի:

Թուրքիայի օգտակար հանածոների շարքում աչքի են ընկնում հատկապես մետաղային ռեսուրսները և քիմիական հումքը (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Օգտակար հանածոյի տեսակը	Պաշարները (մլն. տ.)	Տեղը ըստ պաշարների		
		կապիտալիստ. աշխարհում	Ասիայի կապիտալիստ. երկրների մեջ	Մերձավոր Արևելքում
Քրոմ	60	2	1	1
Վոլֆրամ	15	5	2	1
Բոքսիտներ	68	15	2	1
Պղինձ	40	—	1	1
Ծծումբ	10	4	1	1
Ծարիր	—	4	1	1
Բորատներ	850	2	1	1
Ֆոսֆորիտներ	200	12—16	2	3

Աղյուսակը կազմված է գրականության աղբյուրների հիման վրա [1, 6, 8, 9, 12, 14, 15, 19]:

Այստեղից պարզ է դառնում, որ մետաղային ու քիմիական հումքի մի քանի տեսակների գծով Թուրքիան կարևոր տեղ է զբաղում ոչ միայն Մերձավոր Արևելքում, այլև Ասիայի կապիտալիստական երկրների շարքում և նույնիսկ ամբողջ կապիտալիստական աշխարհում:

Թուրքիայի պղնձի առավել խոշոր հանքավայրերը երկուսն են՝ էրզանի (Հայկական Տավրոս) և Մուրգուլի (Ճորոխի ավազան): Երկու հանքավայրերում էլ պղնձի պարունակությունը հանքաքարի մեջ բավականին բարձր է՝ 2—12 տոկոս: Էրզանիի հանքավայրում հանքամարմինները հորիզոնական տարածում ունեն և խառնված են տարբեր նյութերի հետ: Ենթադրվում է, որ այստեղ պղնձի պաշարները չեն անցնում 10 մլն. տոննայից: Մինչդեռ Մուրգուլիի հանքավայրում հանքամարմինների հզորությունը 35—85 մետր է, ավելի քիչ խառնուրդներով և հանքաքարի 20—30 մլն. տ. պաշարներով [14]:

Աչքի ընկնող տեղ են զբաղում Տաշքյուփրյուի և Բալյաի կոլչեդանային հանքավայրերը 2—7 տոկոս պղնձի պարունակությամբ: Տաշքյուփրյուում էթիբանկը (Թուրքիայի պետական բանկը) կառուցել է հարստացուցիչ ֆաբրիկա, որին ֆինանսավորում է ամերիկյան կապիտալը:

Պղնձի հիմնական հանքավայրերի շրջանում՝ Մուրգուլիում և Էրզանիում կատարվում է հումքի արդյունահանում, հարստացում և ձուլում: 1973 թվականին արդյունահանվել է 1671,1 հազ. տ. պղնձի հանքաքար և ձուլվել 24,7 հազ. տ. պղինձ (22):

Թուրքիայում հայտնաբերված են բոքսիտների խոշոր պաշարներ: Նրանք լայնորեն տարածված են Միջերկրական և Սև ծովերի առափնյա շրջաններում (Անթալիա—Վալիանթեպ և Զոնգուլակ): Սրանք ունեն փափուկ հողախառն կառուցվածք և պարունակում են 50—68 տոկոս Al_2O_3 , 5—23 % SiO_2 , 14—20 %, Fe_2O_3 և 3 % TiO_2 (14): Ալյումինիումի հումք են ծառայում Բեյշեհիր լճի հարավ-արևելյան մասում, ինչպես և Անթալիա վիլայեթի Ակսեկի հանքավայրում տարածված ալունիտները: Սովետական Միության տեխնիկական օգնությամբ Սեյդիշեհիրում (Կոնյայի հարավ-արևմտյան մասում) կառուցվել է ալյումինիումի կոմբինատ տարեկան 60 հազ. տ. ալյումինիումի ստացման կարողությամբ: Միայն 1973 թվականին արդյունահանվել է 333,4 հազ. տ. բոքսիտ, որի կեսից ավելին օգտագործվել է երկրի կարիքների համար, իսկ մնացածը հարստացման ենթարկվելով, առաքվել է Արևմտյան Եվրոպա:

Թուրքիայում կան մի ամբողջ շարք կապար-ցինկային հանքավայրեր, որոնք հիմնականում տեղաբաշխված են չորս գոտում՝ Բալքսիր, Կըրլ-Իրմակի հովիտ, Սև ծովի արևելյան շրջան և Հայկական Տավրոս: Այս հանքավայրերում հանքաքարի մեջ կա նաև պղինձ, կոբալտ, արծաթ և փոքր քանակությամբ ոսկի: Պետությունն է իրագործում Քեբանի (էլյազլ վիլայեթ) հանքավայրի արդյունաբերական շահագործումը, իսկ մասնավոր ընկերությունները շահագործում են Սուսուրլուկի, էդրեմիտի, Սիմալի, Դարենդեյի, Ֆատսայի հանքավայրերը: 1972 թ. տվյալներով Թուրքիան արդյունահանել է 55,7 հազ. տ. ցինկի և 26,3 հազ. տ. կապարի հանքաքար (21):

Կարևոր տեղ են զբաղում նաև հազվագյուտ մետաղները՝ սնդիկը, ծարիրը, մոլիբդենը, վոլֆրամը, ուրանը, որոնցից առաջին երկուսի հանույթը վերջին տասնամյակում զգալիորեն աճել է:

Սնդիկի հիմնական հանքավայրերը Իզմիրի վիլայեթի Օղմիշ գավառում են, որտեղ շահագործվում է Կարարուրունի հանքավայրը: Ներկայումս սնդիկի մեծ մասը ստացվում է Կոնյա քաղաքի շրջանից հյուսիս գտնվող հանքավայրից, ուր սնդիկի պարունակությունը հանքաքարում հասնում է 2,5 տոկոսի: Միայն պետական ձեռնարկություններում 1971 թ. ստացվել է 175 տ. սնդիկ (23):

Ծարիրի հանույթը զգալի է Թոքաթ-Տուրխալի շրջանում: Տուրխալի բնակավայրից հյուսիս-արևելք էջիլ-Իրմակ գետի հովտում գտնվում է էդդեմիտի հանքավայրը, որին կից կառուցված է հարստացուցիչ ֆաբրիկա՝ օրական 22 տ. հանքանյութի մշակման կարողությամբ: Այստեղ ստանում են ծարիրի հարստանյութ՝ 62—65 տոկոս ծարիրի պարունակությամբ: 1973 թ. երկրում արդյունահանված 38 հազ. տ. ծարիրի հանքաքարն համարյա ամբողջությամբ արտահանվել է (22): Դա ավելին է, քան նույն տարում արտահանել են ասիական բոլոր կապիտալիստական երկրները:

Մոլիբդենի հանքավայրեր են հայտնաբերվել երկրի հյուսիս-արևմտյան և Կենտրոնական Անատոլիայի մի շարք վայրերում: Չնայած հանքաքարի պաշարները մեծ չեն, շուրջ մեկ միլիոն տոննա, այնուհանդերձ Գելեմիկ պլուդի մոտ աշխատում է հարստացուցիչ ֆաբրիկա օրական 300 տ. հանքաքարի մշակմամբ: Ուլուդաղ լեռան շրջանը հայտնի է վոլֆրամի հանքավայրերով: Սակայն հանույթը մեծ չէ՝ 350 տ. հանքաքար (1972 թ.):

Սև մետաղների շարքում ուրույն տեղ է զբաղում բրոմը, որի պաշարնե-

րով՝ 60 մլն. տ., Թուրքիան կապիտալիստական աշխարհում գրավում է երկրորդ տեղը, հանույթով՝ երրորդը: Քրոմի հանքավայրերի թիվը 50-ի է հասնում: Սակայն տարածման հիմնական շրջանը Հայկական Տավրոսն է, որտեղ Գուլեման բնակավայրի մոտ հանքամարմինները երկրի մակերեսից ընդամենը 4—5 մետր խորությամբ վրա են: Գուլեմանի հանքավայրը տալիս է երկրում արդյունահանվող քրոմի հանքաքարի 60 տոկոսը: Հանքաքարը պարունակում է 51,5% Cr_2O_3 , 17% MgO , մինչև 14% Fe_2O_3 և 17,5% Al_2O_3 (11):

Իրենց նշանակությամբ աչքի են ընկնում Ֆետհիե, Թոքաթ, Դադրդի, Բաշլուրեն հանքավայրերը:

Համաշխարհային շուկայում քրոմի մեծ պահանջարկով և Թուրքիայում մետալուրգիական արդյունաբերության ցածր մակարդակով է բացատրվում քրոմի մշտական արտահանումը: Վերջինս էլ իր հերթին պայմանավորում է արդյունաբերության այս ճյուղի խիստ կախվածությունը քրոմի համաշխարհային շուկայի կոնյունկտուրայից:

Մինչև հիսունական թվականների վերջը Թուրքիայից արտահանվում էր հատկապես քրոմի հանքաքար, իսկ հետագայում մեծացավ քրոմի հարստանյութի արտահանումը: Միայն 1960 թ. 395 հազ. տ. քրոմի հանքաքար է արտահանվել ԱՄՆ, ԳՖՀ, Ֆրանսիա, քիչ չափով նաև Ավստրիա, Նորվեգիա և Իտալիա (16): Ներկայումս արտահանվում է երկրում ստացվող քրոմի 70—80 տոկոսը, հատկապես ԳՖՀ, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա և Ֆրանսիա: ԱՄՆ-ը մետալուրգիական քրոմիտը ստանում է գլխավորապես Թուրքիայից:

Հանքաքարի արտահանման այսպիսի ցուցանիշների կողքին Թուրքիան սեփական կարիքների համար շատ քիչ քրոմիտ է ստանում (շուրջ 30 հազ. տ.):

Թուրքիան աղքատ է երկաթով: Հայտնաբերված ու հետախուզված պաշարները չեն անցնում 250 մլն. տոննայից: Երկաթի արդյունահանումը կազմակերպված է հիմնականում Դիվրիդի և երկրի հյուսիս-արևմտյան շրջաններում: Դիվրիդի երկաթաքարի մեջ ոչ միայն բարձր է մետաղի պարունակությունը՝ 50—58 տոկոս, այլև շատ քիչ է ծծմբի և ֆոսֆորի քանակը: Դրան հակառակ Սև ծովի ափամերձ Չամլաղ-Ֆերդիլի հանքավայրի երկաթաքարի պաշարները, որ կազմում են 70 մլն. տ., ցածրորակ են, մետաղի 18—40 տոկոս պարունակությամբ: Ըստ պաշտոնական աղբյուրների, 1968 թ. երկրում արդյունահանվել է 2, 2 մլն. տ. հանքաքար, 1970 թվականին՝ 2,9 մլն. տ.: Երեք տարի անց նրա հանույթը նվազել է մինչև 2,5 մլն. տ., որի կեսը բաժին է ընկնում Դիվրիդի պետական ընկերությանը: Կարաբլուքում աշխատում է մետալուրգիական մի կոմբինատ, որը օգտագործվում է էրեզլի-Ջոնգուլդակի քարածուխը և Դիվրիդի երկաթաքարը: Իսկ Իսքենդերոնում արդեն մի քանի տարի է, ինչ գործում է ՍՍՀՄ-ի օգնությամբ կառուցված արտադրական լրիվ ցիկլով մետալուրգիական կոմբինատը: Վերոհիշյալ կոմբինատները էրեզլի մետալուրգիական կոմբինատի հետ միասին 1972 թվականին արտադրել են 1,4 մլն. տ. պողպատ, 1,1 մլն. տ. թուջ և շուրջ 400 հազ. տ. գլանվածք (21):

Թուրքիայում հայտնի են մանգանի 129 փոքր հանքավայրեր: Ամենախոշորը Միջերկրական ծովափին Ֆետհիե հանքավայրն է: Ինչպես այս, այնպես էլ էրեզլի և Թեքիրդաղի հանքավայրերում մանգանի պարունակությունը

նր բավականին քարձր է՝ շուրջ 40 տոկոս: Մական մանգանի հանույթը ոչ միայն մեծ չէ, այլև գնալով պակասում է. 1955 թվականին այն կազմել է 50 հազ. տ., 1968 թ. 25 հազ. տ., իսկ 1973 թ. միայն 6,6 հազ. տ. (22):

Մագնեզիումը հանդիպում է քրոմի հետ մեկտեղ նույն հանքաշերտերում: Մետալուրգիական արդյունաբերության զարգացումը նպաստեց նաև մագնեզիումի հանույթի ավելացմանը: Եթե 1938—1946 թվականներին արդյունահանվել է ընդամենը մի քանի հարյուր տոննա, ապա 1973 թվականին այն հասել է 298 հազար տոննայի:

Թուրքիան համեմատաբար աղքատ է վառելիքային ռեսուրսներից: Քարածխի հիմնական շրջանը էրեզլի-Ձոնգուլդակի ավազանն է: Այս հանքավայրը շնայած 150 տարուց ի վեր շահագործվում է, բայց ածխի հանույթը մեծ չէ (շուրջ 8 մլն. տ.) և կատարվում է պարզունակ ձևով: Ավազանում հաշվվում է շուրջ 190 տեղամաս, որոնցից միայն մեկում է, որ հանույթը մեքենայացված է: Գորշ ածխի՝ լիգնիտի, հանքավայրեր հանդիպում են ավելի քան 100 վայրերում, սակայն պաշարների մեծ մասը Արևմտյան Անատոլիայում է (Տավշանլի, Սոմա, Տունչբիլակ, Սյոքե): Լիգնիտ է արդյունահանվում եվրոպական մասում Ուլունքյովրյուի հանքավայրերից: Երկրում լիգնիտի հանույթը գերազանցում է քարածխին և ներկայումս կազմում է 11 մլն. տ.:

Նավթը հիմնականում տարածված է Վանա լճի հարավ-արևմտյան շրջաններում, որտեղ այն արդյունահանվում է Ռամանդաղ, Միսրիչ, Զոկ, Շելմա հանքավայրերում: Հետախուզված պաշարների մասին տվյալները հակասական են՝ 150 մլն. տ. [8], 400 մլն. տ. [13] և 500 մլն. տ. [10] և պակասը լրացվում է ներմուծմամբ, տարեկան շուրջ 9 մլն. տ.: Երկրում գործում են նավթավերամշակման չորս գործարան Բաթման, Մերտին, Իզմիր և Իզմիտ քաղաքներում: 1973 թ. Թուրքիայում արտադրվել է 16 մլն. տ. նավթամթերք: Զոկ բնակավայրից Ուրֆա-Ղազիանթեպի վրայով ծովափնյա Իսքենդերոն է ձգվում երկրում միակ նավթամուղը: Նախագծված է Իրանից Թուրքիա՝ Ախվազ-Իսքենդերոն 1700 կմ երկարությամբ նավթամուղ անցկացնել: Ըստ նախագծի, նրա շինարարությունը (1 մլրդ. դոլար արժողությամբ) ավարտվել է 1975 թվականին:

Բնական գազի հանքավայրերը տարածվում են Մյուրեֆթում (Արևելյան Թրակիա) և Սեյհան գետի հովտում: Ավարտին է մոտենում Մյուրեֆթից Մտամբուլ ձգվող գազամուղի շինարարությունը: Սաքարիա գետի միջին հոսանքի շրջանում էսքիշհիթի քաղաքից ոչ հեռու տարածվում են այլովող թերթաքարերի ոչ մեծ պաշարներ, սակայն հանույթ չի կատարվում:

Վառելիքա-էներգետիկ ռեսուրսների արդյունահանումը անցած երեք ու կես տասնամյակում ունի այսպիսի պատկեր (աղյուսակ 2):

Աղյուսակը կազմված է գրականության աղբյուրների հիման վրա (1, 2, 5, 6, 7, 10, 22):

Թուրքիայում էլեկտրաէներգիայի արտադրության մեջ շարունակ աճում է նավթի դերը: 1972 թ. արտադրված 11 մլրդ. կվտ ժամ էլեկտրաէներգիայի 67,3 տոկոսը տվել են ջերմաէլեկտրակայանները, որոնց վառելիքային հաշվեկշռում հիմնական դերը պատկանել է նավթին (35,3 տոկոս), ավելի պակաս բաժին ունեն լիգնիտը (19,1 տոկոս), քարածուխը (11,4 տոկոս): Վառելիքի այլ տեսակներին բաժին է ընկնում 1,5 տոկոս [10]: Կարևորագույն

Աղյուսակ 2

Վտակների տեսակներ	Արդյունահանումը (մլն. տ.)				
	1936	1946	1960	1968	1973
Քարածուխ	2,7	3,8	3,6	7,5	8
Լիգնիտ	0,2	0,4	3,8	8,1	10,5
Նավթ	—	0,0005	0,4	3,1	3,6

էլեկտրակայաններից են Չատալագլիի, Էրեզլիի, Սեյիտոմերի, Տունչբիլակի, Իզմիրի, Կարաբյուքի, Մերսինի ջերմաէլեկտրակայանները:

Թուրքիան լավ ապահովված է նաև քիմիական իմբի մեջ մտնող հանածոների տեսակներով՝ ծծումբ, աղեր, բորատներ, ֆոսֆորիտներ և այլն: Քեչիբորլուի շրջանում ծծմբի պաշարները անցնում են 7 մլն. տոննայից: Հանքավայրը շահագործվում է 1935 թվականից և ունի ծծմբաքարի բարձրորակ պաշարներ: Ներկայումս Թուրքիայում տարեկան ստացվում է շուրջ 20 հազ. տ. ծծումբ:

Կենսորոնական Անատոլիայում, հատկապես Տուզ լճի մերձակա վիլայեթներում, աղի հսկայական պաշարներ կան: Դրանք շատ են և Հայկական բարձրավանդակի միջին մասում՝ Կադզվան, Տուզլուջա: Երկրում ծովաղի, լճաղի, քարաղի պաշարները գնահատվում են մի քանի մլրդ. տ.: Արդյունաբերական տեսակետից դրանք զգալի նշանակություն կարող են ունենալ, սակայն առայժմ արդյունահանվող աղը սոսկ սննդի համար է օգտագործվում:

Բորատների համաշխարհային հետախույզված պաշարների շուրջ կեսը՝ 850 մլն. տ. գտնվում է Թուրքիայում: Իսկ բորային հումքի արտահանումով (200 հազ. տ.) Թուրքիան գլխում է միայն ԱՄՆ-ին՝ տալով համաշխարհային արտահանման ման 25 տոկոսը:

Ֆոսֆորական հումքի պաշարներով՝ 200 մլն. տ. Թուրքիան ասիական կապիտալիստական երկրների շարքում երկրորդն է: Ադիյամանի և Ղազիանթեպի վիլայեթներում հանքաշերտերը 4—20 մ հզորություն ունեն, իսկ P_2O_5 -ի պարունակությունը հասնում է 32 տոկոսի: Ֆոսֆորական հումքի բազայի վրա Իսկենդերոնում աշխատում է երկրում միակ գործարանը տարեկան ավելի քան 100 հազ. տ. սուպերֆոսֆատի արտադրությամբ:

Թուրքիայում լայնորեն տարածված են մարմարը, գրանիտը, բազալտը, տուֆը, կավը, կավիճը և այլ շինանյութեր: Առավել հետաքրքրություն են ներկայացնում Մարմարի և Էդեյան ծովերի առափնյա շրջանների մարմարի հանքավայրերը, որտեղից տարեկան հանվում է 25 հազ. տ. լավորակ մարմար:

Բացի վերը նշված օգտակար հանածոներից, Թուրքիայում արդյունահանվում են նաև նաթդակ, փրփրահանք (պենկա), ասբեստ, նիկել, բարիտ:

Ընդհանրացնելով պետք է ասել, որ Թուրքիան ինդուստրիալ զարգացման համար ունի բնական նպաստավոր նախադրյալներ՝ բազմապիսի օգտակար հանածոների արդյունաբերական պաշարներ, որոնք ստեղծում են արդյունաբերության հումքային հարուստ բազա: Երեսնական թվականներից սկսած ընդերքի հարստությունների երկրաբանական ուսումնասիրության և արդյունաբերական օգտագործման բնագավառում ձեռք են բերվել նկատելի տեղաշարժեր: Ստեղծվել են լեռնահանքային և վառելիքա-էներգետիկ ինչպես նաև, վերամշակող արդյունաբերության մի շարք արդիական ձեռնար-

կություններ, որոնք կենտրոնացված են պետության, մասամբ նաև մասնավոր ընկերությունների ձեռքում: Այնուհանդերձ, ժամանակակից Թուրքիան ղեկավարում է շոգտադործված հնարավորությունների երկիր՝ միակողմանի զարգացում ունեցող կիսագաղութային բնույթի արդյունաբերությամբ: Հայտնաբերված շատ հանքավայրեր ղեկավարող արտադրական ոլորտում բնորոշված չեն, իսկ օգտագործվող հանքային ռեսուրսներն էլ հիմնականում արտահանվում են որպես հումք, չստեղծելով տեղում վարգացած վերամշակող արդյունաբերություն:

Խ. Արսվյանի անվան հայկական
Պետական մանկավարժական ինստիտուտ

Ստացված է՝ 22. IV. 1975.

Ю. А. МУРАДЯН

ПОЛЕЗНЫЕ ИСКОПАЕМЫЕ И ГОРНОРУДНАЯ ПРОМЫШЛЕННОСТЬ ТУРЦИИ

Резюме

Территория Турции отличается благоприятными геологическими условиями для образования рудных и нерудных полезных ископаемых. Однако на протяжении веков разведывание, добыча и использование рудных ресурсов было запущено, и в Османской империи в этой области не только не намечалось продвижения, но и забывались многие достижения других народов.

Положение в значительной мере изменилось с середины 30-ых годов, когда был создан Горный научно-исследовательский институт. Значительные сдвиги произошли как в поисках полезных ископаемых, так и в исследовании их месторождений, эксплуатации и в развитии горнорудной промышленности. В этом деле, особенно в послевоенные годы, сыграл значительную роль иностранный, в частности американский, капитал. Характеризуются главные месторождения ресурса каждого вида и показатели развития соответствующей отрасли.

Особенно подробно говорится о районах распространения запасов и добыче группы рудных полезных ископаемых и химического сырья. Отмечается, что по некоторым важнейшим видам (хром, вольфрам, бокситы, медь, уран, сера, сурьма, бораты, фосфаты) Турция занимает первое место среди капиталистических стран не только Ближнего Востока, но и Азии, и даже во всем капиталистическом мире.

В статье имеются таблицы, одна из которых дает представление о полезных ископаемых, которые имеют большое распространение в Турции, и о месте, занимаемом по этим ископаемым в капиталистическом мире, а другая информирует о добыче топливно-энергетических ресурсов за последние три с половиной десятилетия.

Хотя в Турции действуют горнорудные, топливно-энергетические и ряд современных перерабатывающих промышленных предприятий, тем не менее в стране слаба связь между добычей полезных ископаемых и горнорудной промышленностью. Этому в большей степени мешает то, что значительная часть добычи природных ресурсов экспортируется.

Современная Турция все же остается страной неиспользованных возможностей, с односторонне развитой полукOLONиальной промышленностью.

Գ ր ւ չ ւ Ն ի թ Յ ի Ն Ն

1. ժաճանկալից Թուրքիան, Երևան, «Հայաստան» 1967.:
2. Կ. Ֆ. Լուդուլֆյու, Թուրքիա, Երևան, «Հայպետհրատ» 1958.:
3. Թ. Խ., Հափորյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, «Միքտ» 1968.:
4. Вишняков М. Х. Проблемы развития нефтяной промышленности Турции. М., 1968.
5. Данциг Б. М. Турция, Воениздат, М., 1949.
6. Джиллов Х. Экономика Турции. «Наука», М., 1971.
7. Ежегодник БСЭ, М., Изд. «БСЭ», 1972, 1973.
8. Еремеев Д. Е. Турция, «Мысль», М., 1973.
9. Капиталистические и развивающиеся страны, М., 1973.
10. Кулиев Р. И. Экономические проблемы развития энергетической промышленности Турции, М., 1973.
11. Магакьян И. Г. Рудные месторождения, Изд-во АН Арм. ССР, Ереван, 1961.
12. Минеральные ресурсы стран капиталистического мира, М., 1968.
13. Моисеев П. П. Турция. М., «Мысль», 1966.
14. Обзор минеральных ресурсов стран капиталистического мира. М., 1965.
15. Победина, М. П., Смирнов В. П., Цыбульский В. В. Экономическая география стран Ближнего и Среднего Востока. «Политическая литература», М., 1969.
16. Розин М. С. География горнодобывающей промышленности капиталистического мира. «Географгиз», М., 1962.
17. Экономика стран мира. «Политическая литература», М., 1968.
18. Эрентоз К. Краткий обзор геологии Анатолии, «Геотектоника» №—2, 1967.
19. „Kim. mühend. mecm. Turk. Chem. Eng. Rev“., 1973, 6, № 57.
20. „Mining Annual Rev“., 1971. June. 374—375.
21. „Mining Annual Rev“., 1973. July. 379—380.
22. „Mining Annual Rev“., 1974. June. 381—382.
23. Statistical tables „Istanbul chamber Commerce“, 1972, № 10—12.